Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Վանաձորի Հ.Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը դասավանդման գործընթացում

Վերապատրաստող, մենթոր՝ Սյուզաննա Ափինյան

Ուսուցիչ՝ Սաթենիկ Վարդերեսյան

Վանաձոր 2023

Բովանդակություն

Ներածություն։ Հետազոտության նպատակը,խնդիրները 3

Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների
կիրառումը դասավանդման գործընթացում։ Գրականության վերլուծություն 5
Եզրակացություն 13

Օգտագործված գրականության ցանկ 16

Ներածություն: Հետազոտության նպատակը,խնդիրները

Ի՞նչ ենք հասկանում «կրթության կազմակերպման մեթոդ» ասելով, ի՞նչ նպատակ է հետապնդում հետազոտությունը:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել,թե ինչ ենք հասկանում «մեթոդ» ասելով, ինչու է անհրաժեշտ օգտվել կրթության կազմակերպման մեթոդներից:

Ուսուցման մեթոդներ ասելով՝ հասկանում ենք գործընթաց ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ:

Ուսուցման մեթոդները դասակարգվում են 3 խմբի.

1. Բանավոր, տեսողական, գործնական:

2. Վերարտադրողական, բացատրական-ցուցադրական, որոնողական, հետազոտական, խնդրի վրա հիմնված և այլն:

3. Ինդուկտիվ և դեդուկտիվ :

Գոյություն ունեն կրթական-ճանաչողական գործունեության արդյունավետությանը միտված վերահսկման մեթոդներ, գիտելիքի, հմտությունների և կարողությունների տիրապետման արդյունավետությունը որոշող բանավոր, գրավոր ստուգումներ և ինքնաստուգումներ: Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա:

Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Դասի արդյունավետության հետ կապված կարևոր նախապայման է դասի ամենօրյա պլանավորումը: Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել,որ առանձին դասերի պլանավորված խնդիրները պետք է հանդիսանան ամբողջ ուսումնասիրվող նյութի ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասը: Դասի արդյունավետության կարևոր հիմք է ճիշտ մեթոդների ընտրությունը: Մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների մտավոր ու զգայական կարողությունների, ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Մեթոդի ընտրության վրա կարող են ազդել բազմաթիվ գործոններ: Դրանք են՝

1. ուսուցման նպատակները և խնդիրները,

2. նյութի բովանդակությունը,

3. ուսումնական նյութի ծավալը և բարդությունը,

4. նոր գիտելիք ձեռք բերելու նկատմամբ աշակերտների շահագրգռվածությունը և համագործակցային հմտությունների մակարդակը,

5. աշակերտների տարիքային առանձնահատկությունները,

6. ուսումնական ժամաքանակը,

7. ուսուցման նյութատեխնիկական պայմանները,

8. ուսուցիչ –աշակերտ փոխհարաբերությունները,

9. աշակերտների թվաքանակը դասարանում,

10. ուսուցչի պատրաստվածության մակարդակը և այլն:

Հետազոտության **նպատակն** է՝ սովորողների մոտ մտավոր,հոգևոր, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումը՝ ուսուցման տարբեր մեթոդների կիրառմամբ :

Հետազոտության **խնդիրներն** են՝ ներկայացնել դասի պլանավորման արդյունավետ մեթոդներ և մոդելներ, դրանց կիրառման առանձնահատկությունները վերհանել:

Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդների և մոդելների կիրառումը դասավանդման գործընթացում: Գրականության վերլուծություն

«Ուսուցման մեթոդը» բարդ և բազմակողմանի հասկացություն է: Այն առաջին հերթին պայմանավորված է ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝

-ի՞նչ սովորեցնել,

-ինչի՞ համար սովորեցնել,

- ինչպե՞ս սովորեցնել:

Այս խնդիրների իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն: Որո՞նք են այն մեթոդները,որոնք կարելի է կիրառել ուսուցման ժամանակ: Գոյություն ունեն ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդներ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց կարևոր են նաև ավանդական մոտեցումների օգտագործումը և համագործակցային ուսուցման կազմակերպումը: Համագործակցային ուսուցումը փոխում է աշակերտի և ուսուցչի դերը դասարանում: Դասավանդման և ուսուցման ղեկավարումը բաժանվում է աշակերտների խմբերի կողմից և նրանց միջև: Աշակերտները ավելի շատ հնարավորություն են ստանում սովորելու, հարցնելու, միմյանց հետ կիսվելու, ինչպես նաև քննարկելու իրենց գաղափարները: Համագործակցային ուսուցման բազմաթիվ մեթոդներ գոյություն ունեն:

Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք: Ըստ Պասի Սահլբերգի՝ «խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ»[1]: Համագործակցային ուսուցմանը նպաստող գործոններից են՝

-դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,

-բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,

- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Անդրադառնանք համագործակցային ուսուցման մեթոդներին:

«Աշակերտների թիմային առաջադիմության» մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ

1.Տե՛ս Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004,էջ 21:

նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդը հնարավորություն է տալիս գնահատել և՛ առանձին աշակերտներին, և՛ խմբերին: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից:

«Խճանկար» մեթոդի ժամանակ աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տրվում է դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերն իրենց հատվածը կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն:

Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները:

«Շրջագայություն պատկերասրահում» մեթոդը «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

«Երեք բանալի և մեկ կողպեք» մեթոդի ժամանակ աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել ծավալուն դասերի դեպքում: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

«Հինգրոպեանոց ազատ շարադրանքի» մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Այսօր հանրակրթական դպրոցների մեծ մասում դասարանների խտությունը անցնում է 20-25-ը (որոշ տեղերում՝ 30-34): Ոչ բոլոր դպրոցներն ունեն համապատասխան կահավորում և պայմաններ: Դասարաններում չկան շարժական

սեղաններ, խմբային աշխատանքի համար նախատեսված պարագաներ, կապի առկայություն, տեսացրիչ, էլեկտրոնային գրատախտակ և այլն:

20 և ավելի աշակերտ ունեցող դասարաններում այս պարագայում նպատակահարմար է կիրառել «Շրջվիր դեպի զույգդ» մեթոդը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս խուսափել դասաժամին ավելորդ աղմուկից, տեղաշարժից և խառնաշփոթից: Աշխատանքային դիրքը լինում է դեմ առ դեմ: Հաղորդակցումը կատարվում է խոսքով, աչքերով: Այստեղ կարևոր է աշակերտներին դիմել պատահական ընտրությամբ՝ հնարավորություն տալով նրանց ներկայացնելու իրենց պատասխաններն ամեն քննարկումից հետո: Նման անհատական պատասխանատվությունը ավելի զգոն է դարձնում զույգին: Այս մեթոդը ուսուցչին հնարավորություն է տալիս անարգել շրջել դասարանում, տալ անհատական հրահանգներ և առանձին մոտեցում ցուցաբերել խմբերին: Այս ժամանակ աշխատանքային աղմուկը կառավարելի է, իսկ աշխատանքային խմբերը չեն խանգարում իրար:

Բնականաբար, առաջին անգամ մեթոդը կիրառելիս չեն կարող թերություններ չլինել, ուստի որոշակի հաջողություն գրանցելուց հետո մեթոդի կիրառումը և արդյունավետությունը բարձրացնելու համար ցանկալի է և օգտակար դրա բազմակի կիրառությունը:

Յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակները խիստ բազմազան են, ինչը ենթադրում է նաև մեթոդի ձևափոխման հնարավորություն: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է: Աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն, ինչը կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է:

Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել

նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ:

Ուսուցչի աշխատանքի զարգացման ընթացքը պետք է արդյունավետ կարգավորել: Դրա համար կարելի է օգտագործել ինքնագնահատման աղյուսակ, որտեղ յուրաքանչյուր փորձից հետո ուսուցիչը գրանցում է տվյալ դասի հաջողություններն ու թերությունները: Դրանց վերլուծության արդյունքում ուսուցիչը հնարավորություն կունենա գտնելու թերությունները շտկելու, կատարելագործելու ուղիներ: Շարունակական աշխատանքի դեպքում ուսուցիչը կարող է հասնել մեթոդի կիրառման առավել արդյունավետության: Ավանդական են համարում բացատրական զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Ավանդական ուսուցման տեխնոլոգիան դաս-դասարանային համակարգի հիմքն է: Դաս-դասարանային համակարգի մասին առաջին անգամ խոսել է Կոմեսնկին: Այն ներկայում էլ համարվում է ուսուցման կազմակերպման հիմնական ձևը: Նա սահմանել է ուսումնական տարվա գաղափարը, մտցրել դպրոցական արձակուրդները, հստակեցրել ուսումնական օրվա կազմակերպումը: Դաս-դասարանային համակարգի բնորոշ առանձնահատկություններն են.

-ուսուցումը կազմակերպվում է նույն տարիքի, նույն պատրաստվածության մակարդակն ունեցող սովորողների խմբի հետ,

-ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է,

-յուրաքանչյուր դաս նվիրված է մեկ ուսումնական առարկայի,

-ուսուցումն իրականացվում է կայուն դասացուցակով,

-ուսուցման մեջ ղեկավարող դերը պատկանում է ուսուցչին[2]:

Ավանդական ուսուցման տեխնոլոգիան հիմնված է բացատրական-ցուցադրական մեթոդի վրա: Ավանդական ուսուցման ժամանակ դասը բաժանվում է երկու հատվածի՝ հին նյութի հարցում և նոր նյութի հաղորդում:

2.Տե՛ս՝ Коменский Я.А., Великая дидактика. Всеобщего совета об исправлении дел человеческих. Пампедия//Педагогическое наследие/Сост. В. М. Кларин, А.Н. Джуринский.-М.,-1989,с .28

Ավանդական ուսուցման նպատակը հիմականում գիտելիքների հաղորդումը և հմտությունների ձևավորումն է:

Բայց, որքան էլ կրթության ավանդական ձևերն արդի լինեն, նրանց փոխարինելու կամ լրացնելու են գալիս նոր ձևեր: Կրթության ոլորտի աշխատողները գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ է կիրառել դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս դեպքում ուսուցչի գործառույթներն են՝

-բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը, դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը,

2.Տե՛ս՝ Коменский Я.А., Великая дидактика. Всеобщего совета об исправлении дел человеческих. Пампедия//Педагогическое наследие/Сост. В. М. Кларин, А.Н. Джуринский.-М.,-1989,с .28

-բաժանել սովորողներին խմբերի և տալ հանձնարարություններ,

- սխալ մեկնաբանությունները չթողնել առանց ուշադրության, սակայն միանգամից չտալ ճիշտ պատասխանը,

-հետևել, որ քննարկվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքն արտահայտող սովորողը,

- օգնել սովորողներին՝ գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ:

Անհրաժեշտ է դառնում սովորողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը: Ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ինքնուրույն գործունեության նպատակը նոր սերնդին կյանքին, աշխատանքին նախապատրաստելն է: Ուսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ: Դրանց կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել: Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար[3]:

Բազմաթիվ մասնագետներ նշում են, որ մտաբերումը ուսուցման առավել արդյունավետ ձևերից է: Մտաբերումը մտապահված գիտելիքի ակտիվացումն է, իմացածը դուրս բերելը: Սովորելու չափանիշն իմացածը դուրս բերելն է, որը նույն մտաբերումն է:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցումն առավել արդյունավետ է, երբ ուսումնական նյութը մատուցվում է խառը: Ուսուցման արդյունավետ գործիքներից մեկը մանրամասնումն է: Շատ կարևոր է աշակերտներին նոր բաներ սովորեցնելիս մանրամասնել և անդրադառնալ՝ ինչո՞ւ է այդպես, ինչի՞ց է բխում այդ հետևությունը, որո՞նք են խնդրի բաղկացուցիչները և նմանատիպ այլ հարցերը: Շատ արդյունավետ հնար է մանրամասնող հետադարձ կապը:

3.Տե՛ս Հակոբյան Ն., Գևորգյան Ս. և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2010, էջ 63-64

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ «գիտեմ», կենտրոնում՝ «ուզում եմ իմանալ», աջ սյունակում՝ «սովորեցի» մտքերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը հարցնում է աշակերտներին, թե ինչ գիտեն այդ թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է «գիտեմ» սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ինչ են ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է «ուզում եմ իմանալ» սյունակը: Դասի վերջում լրացվում է «սովորեցի» սյունակը:

Դասի սկիզբն ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը:

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկն ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Ուսուցման մեթոդներին տիրապետելը մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Ուստի, այդ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման գործընթացում՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումն և ձեռքբերումները:

Եզրակացություն

Այսպիսով, եզրակացնում ենք, որ ուսուցման համակարգին զուգահեռ կարևոր է նաև ուսումնական գործընթացի կազմակերպման ձևը և ուսուցման մեթոդներին տիրապետելն ու դրանք ճիշտ օգտագործելը: Կրթության ոլորտի աշխատողները գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար, դպրոցում անհրաժեշտ է կիրառել դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ: Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Ուստի պիտի կարողանալ դասավանդման մեթոդները, հնարները, փոքր աշխատանքային խմբերն արդյունավետ կիրառել:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Այն կարող է ուղղորդել ուսուցիչը, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Ամենակարևոր հանգամանքը ուսուցման ընթացքում ճիշտ մեթոդի ընտրությունն ու կիրառումն է: Ինչպես տեսանք, գոյություն ունեն ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Մեթոդներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, կիրառելի է տարբեր տարիքային խմբերում և տարբեր թեմաներ ուսումնասիրելիս: Այստեղ արդեն կարևոր է ուսուցչի հմտությունն ու ճիշտ կողմնորոշվելը: Մի մեթոդը հնարավորություն է տալիս գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին: Մյուս մեթոդը՝ զարգացնում լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Ի վերջո, բոլոր մեթոդները փոխներգործուն գործընթաց են ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ:

Ուսուցիչների հիմնական դերը իրենց գիտելիքներն ու տեղեկատվությունն աշակերտներին փոխանցելն է: Դասավանդման նորարարական մեթոդները ոչ միայն դասի ժամանակ ամենաառաջին տեխնոլոգիաների կիրառումն են կամ կրթության վերջին միտումներին անընդհատ հետևելը, այլև դասավանդման և ուսուցման մեթոդները: Դրանք բոլորն ուղղված են ուսուցման նոր ռազմավարությունների օգտագործմանը, որոնք ավելի շատ կենտրոնանում են սովորողների վրա:

Շատ դպրոցներ և ուսուցիչներ փորձում են կիրառել ուսուցման ժամանակակից մեթոդներ՝ սովորողներին դասապրոցեսին ավելի շատ հետաքրքրելու և ներգրավելու համար: Ուսուցման նորարարական մոտեցումները խրախուսում են սովորողներին՝ուսումնասիրել և բացահայտել նոր գիտելիքներ և գործիքներ: Ուսուցման ստեղծագործական մեթոդները թույլ են տալիս սովորողներին խնդրի լուծման համար գտնել նոր ուղիներ:

ԽԻԿ-ը ժամանակակից ուսուցման մեթոդների համակարգ է, որը ուսուցման գործընթացը բաժանում է հետևյալ փուլերի՝ խթանում, իմաստի ընկալում, կշռադատում:



Խթանման փուլի հիմնական նպատակներն են՝
նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները, քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով՝ ակտիվացնել աշակերտներին, աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Իմաստի ընկալման փուլի նպատակներն են՝
սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Կշռադատման փուլի նպատակներից են՝
սովորողը նոր ստացած տեղեկատվությունը կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով, նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրում:

Անհատական կամ խմբային աշխատանք կատարելիս սովորողները գիտեն, թե ինչպես կառավարեն իրենց ժամանակը, որ առաջադրանքներին առաջնահերթություն տան, շփվեն, ավելի լավ աշխատեն ուրիշների հետ և այլն: Խառը ուսուցումը մեթոդ է, որը համատեղում է ինչպես ավանդական ուսուցումը, այնպես էլ ժամանակակիցը:

Հարցումների վրա հիմնված ուսուցումը նույնպես ակտիվ ուսուցման տեսակ է: Դասախոսություն կարդալու փոխարեն դասը սկսում եք հարցեր, խնդիրներ կամ սցենարներ ներկայացնելով:

Այսպիսով, վերը բերվածից եզրակացնում ենք,որ մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման բազմազան մեթոդները հնարավորություն են տալիս կտրուկ բարձրացնել յուրացրած ուսումնական նյութի որակը, հարստացնել ձեռք բերած տեսական գիտելիքները, ձևավորված կարողությունները և հմտությունները կիրառել ոչ միայն դասի ընթացքում, այլև՝ կյանքում: Դրանք ազդում են ոչ միայն աշակերտի գիտակցության, այլև զգացմունքների և կամքի վրա: Այս կամ այն մեթոդի կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է դասի նպատակներով, ուսուցչի ունակություններով, աշակերտների պատրաստվածության աստիճանով, աշակերտների հետաքրքրությունների սահմանով: Եվ, իհարկե, մեթոդների ճիշտ ընտրությունը դասերը կդարձնեն ավելի հաճելի և գրավիչ բոլորի համար:

Օգտագործված գրականության ցանկ

1.Коменский Я.А., Великая дидактика. Всеобщего совета об исправлении дел человеческих. Пампедия//Педагогическое наследие/Сост. В. М. Кларин, А.Н. Джуринский.-М.,-1989.

2.Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004։

3.Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006։

4. Պետրոսյան Հ.Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2008։

5.Հակոբյան Ն., Գևորգյան Ս. և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2010։